



international
alert

Խաղաղության տեսլականը

Հեռնային Ղարաբաղի հակամարտության
վերաբերյալ տեսակետների վերլուծություն



Եվրոպական միության նախաձեռնություն

Peace
is within
our power

Ինթերնեշնլ Էլըրթ (International Alert)

Կազմակերպության մասին

International Alert կազմակերպությունն աշխատում է հակամարտություններից տուժած բնակչության հետ՝ հանուն կայուն խաղաղության կառուցման: Մենք համոզված ենք, որ միայն համատեղ ուժերով կարելի է խաղաղություն կառուցել: Մենք նպաստում ենք հակամարտությունների արմատական պատճառների վերացմանը և դիմակայությամբ տարանջատված մարդկանց ու հանրությունների մերձեցմանը: Խաղաղության կառուցմանը միտված մեր ջանքերը ենթադրում են աշխատանքներ բոլոր մակարդակներում՝ տեղական հանրույթներից մինչև կառավարական կառույցներ: Խաղաղության ձեռքբերումը կախված է ոչ միայն պայմանագրերի կնքումից ու դիմակայող կողմերի զինաթափումից, այլև հանրույթների խաղաղ գոյակցությունից և ծագող հակասություններն առանց բռնության լուծելու նրանց ունակությունից: Մենք համոզված ենք, որ յուրաքանչյուր ոք կարող է իր ներդրումն ունենալ խաղաղ ապագայի կառուցման գործում:

© International Alert 2018

Հեղինակային իրավունքները պահպանված են: Այս հրատարակման ոչ մի հատված չի կարող վերատպվել, պահպանվել որոնման համակարգերում կամ օգտագործվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ որևէ այլ միջոցներով առանց ամբողջական հղման:

Տպագրություն D.R. Ink

Կազմի լուսանկար՝ © Bertrands Riefer/Hemis/Alamy



international
alert

Խաղաղության տեսլականը

Հեռնային Ղարաբաղի հակամարտության
վերաբերյալ տեսակետների վերլուծություն

Լարիսա Սոտիևա, Արդա Ինալ-Իպա, Ջանա Ջավախիշվիլի և Լիանա Կվարչելիա
2018թ. հոկտեմբեր

2018թ. հոկտեմբեր

Երախտիքի խոսք

International Alert կազմակերպությունը երախտագիտություն է հայտնում բոլոր նրանց, ովքեր մասնակցել են սույն հետազոտության նախապատրաստմանը, անցկացմանը և վերլուծությանը: Առանձնակի շնորհակալություն ենք հայտնում մեր գործընկերներին տեղերում Անար Էյուբովին, Ավագ Հասանովին, Գեղամ Բաղդասարյանին, Մարգարիտա Ախվլեդիանին, Մարկ Գրիգորյանին, Մասիս Մայիլյանին, Միքայել Զոլյանին և Շահին Ռզակին՝ մեթոդաբանության մշակման և տվյալների վերլուծության մեջ ունեցած ներդրումի համար: Տյալների ժողովման համար մենք նաև երախտագարտ ենք մի խումբ երիտասարդ հետազոտողների, ներառյալ Ալվարո Սարգսյանը, Անուշ Ղազարյանը, Բախտյար Ասլանովը, Դավիթ Օհանյանը, Մահեռամ Զեյնալովը, Նարինե Աղալյանը, Ռաֆիգա Մուրադովան, Սևինջ Սամեդզադեն, Վաֆա Զեյնալովան և Զոյա Մայիլյանը:

Հրապարակումն իրականացվել է «Եվրոպական գործընկերություն հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման (EPNK)» նախաձեռնության շրջանակներում: International Alert կազմակերպությունը նաև երախտագիտություն է հայտնում հետևյալ ռազմավարական հովանավորներին՝ Նիդեռլանդների արտաքին գործերի նախարարությանը, Իռլանդիայի արտաքին գործերի ու առևտրի նախարարությանը և Զարգացման ոլորտում միջազգային համագործակցության շվեդական գործակալությանը:

International Alert կազմակերպությունն է պատասխանատվություն կրում հրապարակման բովանդակության համար, որը չի արտացոլում մեր հովանավորների տեսակետը կամ քաղաքականությունը:

Բովանդակություն

1. Ներածություն	4
2. Մեթոդաբանություն	5
3. Ինքնության հարցը	7
Հակամարտությունը որպես ինքնության անբավարարի մաս	7
Ապամարդկայնացման պարադոքսը	8
4. Գործառույթների և պարտականությունների բաշխում	10
Գենդերային և սերնդային հակադրություն	10
Կենտրոնի և ծայրամասի միջև անջրպետը	11
Ընդունող կողմի և տեղահանվածների միջև անջրպետը	12
Իշխանությունների և երրորդ կողմերի դերը	13
5. Մտորումներ հակամարտության, խաղաղության և փոխզիջման շուրջ	14
Առասպելներ և քարոզչություն	14
Կարիքների կեղծ բավարարում	16
Խաղաղության և փոխզիջման եզրաբանությունը	16
6. Առաջարկներ	18
Աշխատանք ինքնությանն առնչվող հարցերի վրա	18
Աշխատանք ընտրված թիրախային խմբերի հետ	18
Աշխատանք դիսկուրսի շուրջ	20
Աշխատանք երկխոսության ամենատարբեր ձևերի ուղղությամբ	20



© JAMnews/Hakob Hovhannisyian

1. Ներածություն

1990-ականների սկզբին ծագած Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն առ այսօր մնում է առավել վտանգավոր և նվազ կանխատեսելի հետխորհրդային ողջ տարածքում: Չնայած հակամարտության «սառեցված» բնույթի մասին հայտնի հետտրաբանությունը՝ միջպետական սահմանի և շփման գծի երկայնքով շարունակում են զոհվել քաղաքացիական անձինք և զինծառայողներ: Ավելին՝ 2016թ. ապրիլյան արյունոտ բախումներն աշխարհին ցույց տվեցին հակամարտությունը ռազմական առճակատամբ լուծելու կողմերի պատրաստակամությունը:

Սույն հակամարտության տարբեր մակարդակներում խաղաղարարական նախաձեռնությունների մասնակցության ավելի քան քսանհինգամյա¹ փորձ ունենալով՝ IA-ն ձեռնարկել է հետազոտություն, որը ցույց կտա պատերազմի հավանական ալլընտրանքները, հենց հակամարտող հասարակությունների առաջարկած հակամարտության փոխակերպման ուղիները, ինչպես նաև խաղաղության հաստատման հնարավոր նոր մոտեցումները:

Հետազոտության արդյունքները հաստատում են հակամարտության մասին տարածված զանազան հիպոթեզները: Դրանք նաև նպաստում են Հայաստանի, Ադրբեյջանի և Լեռնային Ղարաբաղի բնակիչների, ինչպես նաև օտարերկրյա փորձագետների կողմից հակամարտության մասին ձևավորված բազմաթիվ կարծրատիպերի հերքմանը: Հետազոտությունը ցույց է տալիս, որ երեք հասարակություններին միավորում են ոչ միայն շատ ընդհանուր միտումներ, այլ նաև զգալի տարբերություններ որոշ հարցերում:

Մենք հուսով ենք, որ սույն հետազոտության մեջ ձևակերպված եզրահանգումներն ու առաջարկներն օգտակար կլինեն հակամարտության բոլոր կողմերի, ինչպես նաև այն արտաքին դերակատարների համար, որոնք ներգրավված են խաղաղ լուծման որոնման գործընթացում: Մենք նախատեսում ենք հետազոտության արդյունքների լայն տարածում՝ որպեսզի դրանք մտորումների, վերլուծությունների և յուրատիպ գաղափարների որոնման տեղիք տան, գաղափարներ, որոնք կբխեն անմիջականորեն հակամարտության մեջ ներգրավված հանրությունների ներկայացուցիչների կողմից, ինչն էլ թույլ կտա խաղաղ կյանքի ապահովման ուղղությամբ գործնական քայլեր անել բոլոր նրանց համար, ովքեր ապրում են այնտեղ:

1 Նախապատմությունը ծանոթանալու համար տե՛ս «International Alert, Advancing the prospects for peace: 20 years of civil peacebuilding in the context of the Nagorny Karabakh conflict», London, 2013, https://www.international-alert.org/sites/default/files/Caucasus_NagornyKarabakh_CivilPeacebuilding20Years_EN_2013.pdf

2. Մեթոդաբանություն

IA-ը և տարածաշրջանային փորձագետների խումբը մշակել է որակական հետազոտության մեթոդաբանություն, որը հիմնված է երեք հասարակություններում սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչների շրջանում անցկացրած խորացված կիսակառուցված քայլին հարցազրույցների վրա: Մենք իրականացրեցինք հետազոտության մոտեցում՝ քննարկելով հակամարտության և խաղաղության համար վճարած գինը: Հարցվածներին առաջարկվեց պատմել հակամարտության փոխակերպման հեռանկարի իրենց տեսլականի մասին ելնելով սեփական փորձից: Նրանք մտորում էին, թե ինչպես իրենց և մյուսների կյանքը կարող էր այլ կերպ լինել առանց պատերազմի, և իրենք, որպես անհատներ, ինչ կարող էին անել խաղաղության համար:

Սույն մեթոդաբանությունը թույլ է տալիս նախանշել առաջընթացի ուղիները և ուրվագծել այն փոխզիջումային լուծումները, որոնք թույլ կտան խուսափել դառը փորձը ապագա սերունդներին փոխանցելուց: Առանձին քաղաքացիների անձնական կարծիքների այսպիսի գնահատականն ու վերլուծությունը դարձան այն գործիքը, որը մեզ օգնեց երևան հանելու բոլոր երեք հանրություններում առկա խաղաղ կարգավորման հանրային ներուժն ու հնարավոր ռեսուրսները:

Սույն մեթոդաբանության կիրառումը թույլ է տվել ժողովել շարքային մարդկանց կարծիքները, ում ձայնը հաճախ անտեսվում է հակամարտության կարգավորմանն առնչված հարցերում: Մենք ձգտել ենք հասկանալ նրանց հույսերը, վախերն ու ապագայի պլանները՝ հայացք ձգելով այդ ամենի վրա շարքային մարդկանց անձնական փորձի հեռանկարի միջոցով: Այսօրինակ խորապես անձնական պատմությունների վերլուծությունը մեզ թույլ է տվել հանգամանորեն ուսումնասիրել և հասկանալ ազդեցության այն աստիճանը, որը հակամարտությունն ունեցել է դրան մասնակից բոլոր կողմերի վրա, ինչպես նաև ուրվագծել այն ոլորտները, որոնք ներուժ ունեն նպաստելու հակամարտության հետագա փոխակերպմանը: Ամեն ինչից զատ՝ սույն հետազոտությունը շարքային մարդկանց հնարավորություն է տվել արտահայտվելու հակամարտության թեմայով, ինչն էլ, իր հերթին, նրանց թույլ է տվել զգալու, որ իրենց կարծիքը նույնպես նշանակալի է: Վերլուծությունն արել է փորձագետների խումբը, հոգեբանների մասնակցությամբ, ինչը մեզ օգնել է հասկանալու անհատների ու նրանց միջավայրի հարաբերությունների գործոնները:

IA-ն այս մեթոդաբանության համար վերապատրաստել է մի խումբ հայ և ադրբեջանցի երիտասարդ հետազոտողների: Համատեղ ուսուցումը վերջիններիս ընձեռեց եզակի առիթ հանդիպելու «մյուս» կողմին, քանի որ նրանցից շատերի համար այն իրենց առաջին նման փորձն էր: Այս երիտասարդները, որոնք հիմնականում նորաթուխ են խաղաղության հաստատման գործում, իրականացրեցին 110 հարցազրույց 41 քաղաքային և գյուղական վայրերում², մայրաքաղաքներում, շփման գծի երկայնքով, ինչպես նաև ներքին տեղահանության ենթարկված մարդկանց բնակավայրերում: Կարծիքների և գնահատականների ընդգրկումն հավաքումն ապահովելու համար IA-ն ջանում էր պահպանել հարցվածների գեներացիան, սոցիալական և տարիքային հավասարակշռությունն այլ հատկանիշների թվում:

Տվյալների ժողովման փուլում հետազոտողները ստիպված են եղել առնչվել ամենատարբեր խնդիրների մի ամբողջ ներկայանակի հետ: Ինքնին հետազոտության թեման քաղաքական տեսանկյունից առանձնանում է բարձր զգայունությամբ: Դրան հավելվել են հետազոտողների հոգեբանական ներքին խնդիրները, կապված այն հանգամանքի հետ, որ իրենք էլ են ապրում անորոշության մեջ, ինչն էլ կարող էր անդրադառնալ թե գործընթացի և թե արդյունքների վրա: Հետազոտողները ցանկացած հարցազրույցի հավելել են իրենց սեփական մեկնաբանությունները, ինչը վերլուծության փուլում թույլ է տվել գնահատել, թե որքանով է իրենց սեփական տրավմատիկ փորձն ազդում իրեն իսկ կողմից ժողովվող տեղեկատվության վրա: Չնայած վերոնշյալին, ինչպես նաև որոշ հարցերի շուրջ առկա հակասությունների առկայության բոլոր երեք հանրություններն էլ ցուցաբերել են մտքի ճկունություն ու բացասականի մեջ դրականը

2 Գործընկերների և շահառուների գտնվելու վայրը չի բացահայտվում նրանց անվտանգությունն ապահովելու համար:

տեսնելու ունակություն: Ժողովվել է տեղեկատվության մի հսկայական զանգված, որն աչքի է ընկնում ինչպես զգացմունքայնության բարձր աստիճանով, այնպես էլ սովորական մարդկանց կյանքի վրա հակամարտության ազդեցության մասին խորունկ մտորումներով:

Վերջում կարևոր ենք համարում նշել, որ հարցումն անցկացրել ենք 2017 թվականի վերջին, իսկ ստացված տվյալների վերլուծությունն իրականացվել է 2018-ի առաջին կիսամյակում: Ուստի, չնայած այն բանին, որ Հայաստանի քաղաքական կյանքում 2018-ի ապրիլի իրադարձություններն, ըստ երևույթին, անմիջական ազդեցություն չեն ունեցել հետազոտության արդյունքների վրա, դրանք, այդուհանդերձ, մեր կողմից հաշվի են առնվել առաջարկների ու երաշխավորանքների ձևակերպման ընթացքում:

3. Ինքնուրույն Կարգը

Հակամարտությունը որպես ինքնուրույն անքակտելի մաս

Ղարաբաղյան հակամարտությունն իր գոյության երկար տարիների ընթացքում այնպես խորն է ներգործել մարդկանց վրա, որ դարձել է նրանց ինքնուրույն մաս: Մարդիկ դադարել են իրենք իրենց և սեփական կյանքը դիտարկել հակամարտությունից զատ: Կարճ ասած՝ այն դարձել է կյանքի բնականոն մաս: Անձի ինքնուրույն մասի առանձնացումը և դրան քննադատորեն նայելը բարդ և ցավոտ ընթացք է: Սրանով էլ բացատրվում է, թե ինչու շատ կարգվածներ հայտնում են, որ հակամարտությունը չի ազդում իրենց վրա:

Այնուամենայնիվ, իրականում այս հետազոտությունը ցույց է տալիս, որ մարդիկ իրենց կյանքը պլանավորում են հակամարտության լույսի ներքո, դրա ներքին և արտաքին առնչություններով: Հետաքրքիր է, որ տարբեր հասարակություններում մարդու անձնական կյանքի պլանավորման ակնկալիքները տարբեր են: Այսպես, Հայաստանում և Ադրբեջանում մարդիկ ասում են, որ դժվարանում են պլանավորել իրենց ապագան երկարաժամկետ կտրվածքով: Սա պայմանավորված է նրանով, որ մարդիկ ապրում են «սերտած անօգնականության» համակարգին համապատասխան. հոգեկան այնպիսի վիճակ, որի դեպքում մարդկանց նախկին փորձը ստիպում է նրանց հավատալ, որ իրենք չեն հսկում իրավիճակը և, ուստի, չեն էլ փորձում դա անել: Լեռնային Ղարաբաղում, մյուս կողմից էլ, մարդիկ վստահություն ասում են, որ կարողանում են իրենց կյանքը պլանավորել շատ տարիների հեռանկարով:

Չնայած այս վերաբերմունքը բացատրվում է հոգեբանական ադապտացիայի մեխանիզմով, այնուամենայնիվ այն առաջացնում է լուրջ ռիսկեր, քանի որ կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ մարդիկ, գործերի նման ընթացքը բնական ընկալելով, կարող են ենթագիտակցաբար դիմադրել հակամարտության լուծման ցանկացած փորձին:

«Ես նույնիսկ չեմ մտածել այն մասին, թե ինչպիսին կլինեն իմ կյանքն առանց հակամարտության... Հիմարություն կլինեն պատասխանել այդ հարցին, որովհետև այն կլինեն զուտ տեսական»:

«Ես ծնվել եմ պատերազմի ժամանակ և ինձ համարում եմ «անկախության» սերնդի մաս: Չեմ կարող կյանքը պատկերացնել առանց այս հակամարտության: Հայրս կովել է պատերազմում, և ես մանկուց ի վեր զգացել եմ պատերազմի հետևանքն ինձ վրա»:

«Մենք պետք է կամ մեռնենք, կամ վերադարձնենք մեր հողերը և գտնենք ներքին հանգստություն...»:



© JAMnews/Knar Babayan

Ապամարդկայնացման, կամ դեհումանիզացիայի պարադոքսը

Հակամարտության «բնականոնացումը» հանգեցրել է այդ հակամարտության իրականությանը ստիպված ապրող մարդկանց ապամարդկայնացմանը: Ապամարդկայնացումը, կամ դեհումանիզացիան, որպես երևույթ բոլոր երեք հասարակություններում շատ երկար ճանապարհ է անցել և յուրաքանչյուրում բացահայտվել է յուրովի: Երբ մարդիկ ապամարդկայնացված են, նրանց անհատական պատմություններն անհետանում են փոխարինվելով ավելի մեծ խմբի պատմության շահերով: Դեհումանիզացիայի դիմացինին մարդկային կերպարից զրկելու գործընթացը տեղի է ունենում, երբ հակամարտությունը դառնում է առասպելաբանված՝ ընկալվելով որպես անսահման և անկառավարելի երևույթ: Այս հակամարտության ծավալների հետ համեմատած՝ անհատը կորցնում է իր արժեքը: Մարդը դառնում է անկարևոր և անտեսանելի, նույնիսկ մահը համարվում է խելամիտ գին, որը պետք է վճարվի «կարևոր» այս հակամարտության համար: Յուրաքանչյուր անհատի կյանք արժեզրկված է, քանի դեռ մարդկանց ուշադրությունը կենտրոնացած է հակամարտության մեջ հաղթանակի կամ պարտության կարևոր թեմայի վրա:

Չնայած հակամարտության ժամանակ «ուրիշի» կերպարը ապամարդկայնացնելը տարածված հոգեբանական մեխանիզմ է, տվյալ կոնտեքստում այն արտահայտում է խորհրդային մտածելակերպը, որի դեպքում պետական նպատակներն առաջնային էին, իսկ անհատը պարզապես դրան հասնելու միջոց: Անհատական կարծիքներն արժեքավոր չէին համարվում, որն էլ տանում էր ինքնագնահատականի կամ հասարակության մեջ փոփոխությունների վրա ազդելու սեփական ուժերի նկատմամբ հավատի կորուստի:

Մյուս կողմից էլ, երբ հարցվածները խոսում էին հակամարտության լուծման հնարավորությունների և «մյուս» կողմի մարդկանց հանդիպելու մասին, ուսումնասիրության արդյունքները ի հայտ բերեցին կարծիքների տարբերություններ՝ կախված այն փաստից, թե արդյոք նրանք պատասխանում էին իրենց անձնական, թե իրենց սոցիալական խմբի տեսանկյունից: Հարցվածների կողմից տրված ամենահետաքրքիր և պատկերավոր պատասխաններն արձանագրվել են, երբ իրենք արտահայտում էին իրենց անձնական կարծիքները: Հետևաբար, պատասխանելիս նրանք գերադասում են իրենք իրենց ընկալել ավելի հանդուրժող և պատրաստ փոխզիջմանը որպես անհատներ, քան երբ նրանք ներկայացնում են իրենց համայնքը, հասարակությունը կամ որևէ այլ խմբավորում:

«Մենք շատ լավ ապրում էինք հայերի հետ: Ուրեմն ինչու նորից միասին չապրենք: Շատ հայ շինարարներ կառուցում էին մեր տներն ու կտուրները: Նրանք դառնում էին մեր «քիրվան»՝ մեկը, ով գրկում էր երեխային թլպատման ժամանակ: Մեր տղամարդիկ ամուսնանում էին հայուհիների հետ: Հայերը շատ բարի մարդիկ են: Հայաստանի հասարակ ժողովուրդը մեղավոր չէ»:

4. Գործառույթների և պարտականությունների բաշխում

«Խաղաղությունը կյանքն է առանց պատերազմի և հակամարտության, նշանակություն չունի այն պետությունների միջև է, թե ընտանիքի ներսում»

Այս տարածաշրջանում կա սոցիալական դերերի և պարտականությունների բաշխման համաձայնություն: Այս շրջանակում էլ հասարակությունը հակամարտության և դրա կարգավորման համար պատասխանատվությունը բավականին արդյունավետորեն պատվիրակել է մարդկանց առանձին խմբերի:

Գենդերային և սերնդային հակադրություն

Չնայած հարցվածները նշում էին, որ բոլորը, հատկապես երեխաները, կանայք, զինվորները, աղքատները և սահմանամերձ տարածքներում ապրողները, տուժում են հակամարտությունից, սակայն հավատացած են, որ հակամարտության «հարցը լուծելու» պատասխանատվությունը հիմնականում դրվում է ավելի տարեց տղամարդկանց վրա (թեև Լեոնային Ղարաբաղում այն առաջին հերթին ընկալվում է որպես համընդհանուր պատասխանատվություն): Նման լիազորումը կարող է ցուցադրել դժվար և անլուծելի թվացող այս հիմնահարցի լուծման պատասխանատվությունից հրաժարվելու հակում: Սակայն, նման մոտեցումը նաև արտահայտում է հասարակության կողմից ներգրավվածությունը, իրավիճակի նկատմամբ հսկողությունը պահպանելու ձգտումը՝ ցույց տալով, որ հասարակությունն ունակ է «բնականոն» գործելու ոչ բնականոն պայմաններում: Ուստի՝ այն նաև գործուն հոգեբանական մեխանիզմ է:

Գենդերի ուսումնասիրությունը՝ որպես մարդկային ինքնության տարբեր կողմերի (տարիք, սոցիալական խավ, սեռական կողմնորոշում, ընտանեկան կարգավիճակ, ազգային կամ կրոնական պատկանելություն) միջև բարդ հարաբերություն, պահանջում է հատուկ մեթոդաբանություն համապարփակ մոտեցում, ուստի դուրս է գալիս այս հետազոտության շրջանակից: Այդուհանդերձ, պարզվում է, որ հակամարտության ձգձգված բնույթը նպաստում է կոշտ հայրիշխանական գենդերային դերերի ձևավորմանը և հարատևությանը, որի դեպքում կանանց, օրինակ, վերագրված է խնամելու, դաստիարակելու և հակամարտության հարցերում հասարակության արական անդամներին նեցուկ լինելու «բնական» դերը: Մասամբ էլ այս պատճառով է, որ հարցման մեջ կանանց, հատկապես երիտասարդ աղբյուրներին ներգրավելը դարձավ առանձին մարտահրավեր:

Ավագ սերունդը չի կարող կամ չի լիազորի հակամարտության պատասխանատվությունը երիտասարդներին: Դա կարող է մի շարք պատճառներ ունենալ. տարեց մարդիկ երկարամյա առնչություն ունեն հակամարտության հետ, նրանք ցանկանում են պաշտպանել երիտասարդներին դրանից կամ էլ չեն վստահում հիմնահարցը լուծելու վերջիններիս կարողությունը: Այս առումով կրկին Լեոնային Ղարաբաղն առանձնանում է. հարցվածները նշում էին երիտասարդների փորձառությունը 2016թ. ապրիլի ռազմական գործողությունների ժամանակ, ուստի նրանք պատասխանատվություն են վերցրել հակամարտության համար, և տարիքային գործոնն այլևս նվազ կարևոր է:

Ավելին, երիտասարդների նոր սերունդը մեծացել է չունենալով «մյուս» կողմի հետ շփվելու կամ ապրելու սեփական փորձ: Սրանով ստեղծվում է բարեբեր հիմք սխալ ընկալումների, կարծրատիպերի և զգացմունքների նենգափոխման համար: Չնայած երիտասարդներն ավելի առաջադեմ են և իրենց հեռու են



© JAMnews/Teymur Zahidoglu

համարում հակամարտությունից (սակայն կրկին ոչ Լեռնային Ղարաբաղում), միևնույնն է չեն դառնում ավելի խաղաղասեր: Ընդհակառակը, շատ երիտասարդներ պատերազմի վերսկսման դեպքում պատրաստ են զենք վերցնել:

Կենտրոնի և ծայրամասի միջև անջրպետը

Հակամարտության հետ կապված կարծիքների և ընկալումների տարբերությունները կարելի է տեսնել ոչ միայն անհատի և խմբի, երիտասարդների և տարեցիների միջև, այլ հենց հասարակությունների տարբեր խմբերի ներսում դերերի և պարտականությունների նմանատիպ բաժանմամբ:

Մայրաքաղաքներում բնակվողները հակված են միանգամայն պարզ պատկերացում ունենալ այն մասին, թե ինչպես պիտի ապրեն սահմանամերձ վայրերի մարդիկ և ինչ կարողությունների նրանք պետք է տիրապետեն: Նրանք հստակ հասկանում են, թե որքան հայրենասեր պետք է լինեն կրակագծին մոտ ապրողները, որպեսզի հանգիստ զբաղվեն առօրյա գործերով, երբ փամփուռները սուղում են իրենց գլխավերևում:

«Եթե դուք հարցնեք սահմանում ապրող գյուղացիներին, նրանք կտրականապես դեմ են պատերազմին, բայց եթե հարցնեք մայրաքաղաքում կամ այլ քաղաքներում ապրող երիտասարդներին, նրանք ուզում են պատերազմ, նրանք չեն մտածում գյուղերում ապրող մարդկանց մասին. նրանք պարզապես ուզում են կռվել»:

«Այժմվա պես ես կշարունակեմ ապրել իմ ամենօրյա կյանքով, մինչև որ խաղաղություն հաստատվի: Շփման գծում կամ սահմանին ապրող մարդիկ պետք է նախ և առաջ զգույշ լինեն, այնուհետև ապրեն իրենց առօրյայով... Ասում են «Մենք չենք վախենում ոչնչից: Այստեղ կմնանք մինչև վերջ»:»

«Վիճարկվող և սահմանամերձ տարածքներում ապրող մարդիկ, ցավոք, պետք է ընտելանան, որ իրենց վրա կրակում են: Նույնիսկ կարելի է ասել, որ արդեն ընտելացել են»:

«Կան տեղահանվածներ և փախստականներ, որոնք կարևոր տեղ են զբաղեցնում մեր հասարակությունում: Նախկինում (նրանք) ... Բաքվում երբեք կարևոր դեր չեն ունեցել, բայց հիմա նրանք ... ավելի կարևոր դերով են հանդես գալիս, քան տեղացիները ... Առանց նրանց հասարակությունն ուրիշ կլիներ»:

“Ես շատ քիչ մարդկանց եմ հանդիպել, որոնք կուզենային գնալ Ղարաբաղ: Նույնիսկ ծերերի մեջ նմանները շատ քիչ են: Բացի այդ, նրանք արդեն ընտելացել են: Այ, եթե վերադառնան, ապա այդ ժամանակ կտառապեն, քանի որ կյանքն Աղդամում նույն բանը չէ, ինչ կյանքը Բաքվում”:

«Մենք ուզում ենք ազատվել «փախստականի» պիտակից, ինչպես սովորաբար մեզ անվանում են տեղացիները»:

Այս տեսանկյունից Հայաստանն ու Ադրբեյջանը կրկին միանգամայն նման են: Որքան հեռու են ապրում սահմանից, այնքան բարձրագույն են խոսում հայրենասիրության մասին: Հակամարտության ընկալման մեջ համանման տարբերություններն ակներև են Հայաստանից և Լեռնային Ղարաբաղից հարցվածների մոտ մի կողմից, և Բաքվից ու կրակագծին հարող տարածքներից՝ մյուս կողմից: Լեռնային Ղարաբաղի ներսում թվում է, թե տեղիք չկա այսպիսի տարբերությունների համար:

Ընդունող կողմի և տեղահանվածների միջև անջրպետը

Բոլոր երեք հասարակություններում էլ միտում կա հակամարտության քննարկումից բացառել փախստականներին և տեղահանվածներին, ովքեր ամենից շատ են տուժել պատերազմից: Տարբեր պատճառներով թե՛ իշխանությունները, թե՛ հասարակությունը մարզին ալացնում են այս խմբերին և փորձում նրանց հետ պահել անկախ դերակատար դառնալուց: Նրանք կամենում են, որ այս խմբերը գործեն որպես խողովակ պետական քաղաքականության նպատակների համար հակամարտության և ներպետական հարցերում:

Բնակչության մեծ մասի համար փախստականները և տեղահանվածները քավության նոխազ են, որոնց մեղադրում են հասարակության բոլոր խնդիրների մեջ: Այս մարդիկ հարմար են շահեկան համեմատության համար: Ավելին, նրանց հաճախ շփոթում են տնտեսական փախստականների հետ. սա տարածված խնդիր է շատ հասարակություններում, ինչի արդյունքում խորանում են անմարդասիրության դրսևորումները:

Տեղահանվածների և փախստականների վերաբերմունքն այս մերժողականության դրսևորմանը տարբեր է և այդքան էլ չի համընկնում պաշտոնական դիրքորոշման հետ: Պատերազմի տրավմատիկ փորձը, անծանոթ միջավայրում ապրած տարիները, իրենց բնական սոցիալական դերերի և օժանդակության կորուստը որոշ մարդկանց հանգեցրել է ի վերջո իրենց վերագրված դերերին հարմարվելուն:

Իշխանությունների և երրորդ կողմերի դերը

Քանի որ շատերի ընկալումներում հակամարտությունը չափազանց մասշտաբային է և անհնար է լուծել խաղաղ միջոցներով՝ մարդիկ սովորել և հնազանդվել են այս իրավիճակում իրենց սեփական անօգնականությանը: Որպես հետևանք նրանք երրորդ կողմին են լիազորում դրա պատասխանատվությունը: Շատ հարցվածներ մեզ ասացին, որ հակամարտության լուծումով պետք է զբաղվեն իշխանությունները և երրորդ կողմը՝ ի դեմս ԵԱՀԿ-ի, ԱՄՆ-ի և Ռուսաստանի:

Տարօրինակ է, բայց փաստորեն մարդիկ չեն վստահում այդ կողմերին: Պատասխաններում երևաց ցածր վստահություն, մասնավորապես Ռուսաստանի հանդեպ, որին համարում են գլխավոր արտաքին դերակատար՝ միջնորդի իր երկդիմի դիրքորոշմամբ, քանի որ զենք է մատակարարում բոլոր կողմերին: Ավելին, երեք հասարակություններում հարցվածները հանդես էին գալիս իրենց սեփական իշխանությունների նկատմամբ ունեցած ցածր վստահությամբ, երբ անուղղակի խոսում էին սոցիալական արդարության անհրաժեշտության և կոռուպցիայի մասին: Այս ընդհանուր թեման առաջացավ այն ժամանակ, երբ նրանք քննում էին, թե ով կշահի պատերազմից կամ «ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն» իրավիճակի պահպանումից:

«Բոլորը սպասում են մեր գերագույն հրամանատարի հրամանին: Եթե նա հրամայի բոլորը կգնան կովելու: Նրանք պետք է ապրեն այնպես, ինչպես կարող են: Իհարկե, նրանք վտանգի մեջ են: Չեն կարող ապրել խաղաղ կյանքով: Կառավարությունը պետք է օժանդակի նրանց, իսկ մենք էլ՝ մեր կառավարությանը»:

«Իհարկե, տուժում է հենց սովորական մարդը և ժողովուրդը: Ես չեմ կարծում, որ ինչ-որ բան այս երկրում կարող է ազդել մեծահարուստների վրա: Նրանք պարզապես մտահոգ չեն»:

5. Մտորումներ հակամարտության, խաղաղության և փոխզիջման շուրջ

Առասպելներ և քարոզչություն

«Ղարաբաղյան հակամարտությունը հատկապես անհանգստացնող է, որովհետև, օրինակ, երբ կարողում ես սոցցանցերի նյութերը, դու հասկանում ես, որ քառս է սկսվում, ու դու ոչինչ չես կարող անել: Ոչինչ: Սարսափելի է»:

«Նոր սերունդն այլ կերպ է մտածում, շատ բան է սրբացվում: Եթե ավտորուսը կանգնեցնեք զբոսայգու մոտ և սկսեք բղավել «Ղարաբաղը մերն է», մարդիկ վազելով կգան և կմիանան ձեր վանկարկումներին: Իսկ հետո, եթե բացեք դուռը և ասեք. «Եկեք գնանք և վերցնենք Ղարաբաղը», բոլորը հանկարծ կհիշեն, որ երեխային պետք է մանկապարտեզից վերցնեն կամ այլ նման բաներ»:

«Այստեղ պատերազմ չկա, բայց առկա է տեղեկատվական պատերազմ: Այն ազդում է [մեզ վրա]»:

Ուժի հասկացությունը հակամարտության մեջ դարձել է առասպելաբանված և հանդես է գալիս որպես գործիք բոլոր երեք կողմերի հարցվածների համար: Նրանց պատասխաններում ուժն ընկալվում է իբրև իշխանության և փողի համակցություն հակամարտություն առաջացնելու, այն շահարկելու, ինչպես նաև կարգավորելու կարողությամբ: Այսպիսի ուժին տիրապետում են իշխանությունները, երրորդ կողմի ներկայացուցիչները, գործարարները, սփյուռքը, միջազգային ոչ կառավարական կազմակերպությունները (ՄՈԿԿ-ներ) և փող ու ազդեցություն ունեցող այլ անձինք:

Նույնիսկ հակամարտության ընդգրկումն ու դրա խաղաղ կարգավորման հնարավորություններն են առասպելականացված: Շատ հարցվածների համար հակամարտությունը վիթխարի, անվերջ և, հետևաբար, բարդ ու անհնարին է խաղաղ լուծման առումով: Ըստ նրանց տրամաբանության՝ միայն ռազմական ուժն է ունակ զբաղվել այսպիսի մեծության հարցի հետ: Մարդիկ պարզապես իրազեկ չեն, թե ինչ ուժ ունի խաղաղությունը:

Հակամարտությունն այնպես է առասպելաբանվել, որ այն համարվում է չափազանց կարևոր և նույնիսկ արժեքավոր: Սա կարող է վերագրվել հակամարտության համար վճարված և առ այսօր վճարվող գնի գիտակցման զգայական բեռին: Պաշտոնական հոետորաբանությունն էլ իր հերթին հակամարտությունն անլուծելի է ներկայացնում, իսկ շատ հարցվածներ նշում են փողի գործունը, որը վաստակում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին դերակատարները այս հակամարտության շնորհիվ: Երկար տարիների «ո՛չ խաղաղություն, ո՛չ պատերազմ» կարգավիճակի արդյունքում այս արժեքավոր և կարևոր երևույթի մաս զգալու ցանկությունը կողմերի մոտ երևան է բերել որոշակի ոգևորություն հակամարտության մասին խոսելիս:

Ադրբեջանում հարցվածներն առանձնակի քննադատաբար էին վերաբերվում պետական քարոզչությանը: Նրանք



© JAMnews/Knar Babayan

զանգվածային լրատվության միջոցների կողմից թշնամու կերպար ստեղծելու և պահպանելու ջանքերը դիտարկել են որպես մի գործոն, որը կարող էր ցանկացած պահին բախում սադրել և խոչընդոտել հակամարտության վերափոխմանը: Շատերն էին արտահայտում անհանգստություն առ այն, թե մյուս կողմի նկատմամբ քարոզչությունը և ատելության լեզուն ինչպես կարող է հետագայում անդրադառնալ ապագա սերնդի վրա՝ թե՛ անհատների, թե՛ հանրության մակարդակներում:

Սա թույլ է տալիս ենթադրել, որ ադրբեջանական հասարակության մեջ ինքնության որոնումը և զարգացումը մասամբ տեղի է ունենում քարոզչության միջոցով: Նշանակում է՝ առկա է զգալի վտանգ, որ հակամարտության կարգավորման խաղաղ ուղիներ փնտրելու շուրջ հանրության ներուժը և անհատական կարծիքները ժամանակին զուգընթաց կարող են էլ ավելի թուլանալ և դառնալ առավել ոչ պոպուլյար:

Հայաստանում հարցվածները քարոզչության հարցը որպես խնդիր ուղղակիորեն չեն քննարկում: Այնուամենայնիվ, թե՛ Հայաստանում և թե՛ Լեռնային Ղարաբաղում, ի պատասխան մեր անուղղակի հարցերին, հարցվածները բարձրաձայնում էին խիստ ազգայնական գաղափարներ, որն էլ ուղղակիորեն կապակցում էր իրենց դիրքորոշումը սեփական ազգային ինքնության հետ: Չնայած հակառակ կողմի համեմատ նրանք ավելի հազվադեպ էին հակված թշնամու կերպարի քարոզչական արժարժմանը, բայց դա ամենևին չի նշանակում, որ իրենց դիրքորոշումն ավելի ճկուն է կամ նրանք ավելի բաց են փոխզիջման որոնման համար: Կարելի է ենթադրել, որ այս հարցվածները ստատուս քվոյի պահպանումը դիտում են որպես «իրացված արդարություն» և իրենց սեփական ազգային ինքնության հետագա ամրապնդում:

«Ես հավատացած եմ, որ կարող եմ փոփոխություն կատարել՝ նույնիսկ պարզապես կիսելով իմ գիտելիքն ու խաղաղարար գաղափարները երիտասարդ սերնդի հետ... ազատվել ատելության լեզվից և բացասական ազդեցությունից, որն ինչ-որ պահի կարող է նպաստել հակամարտության կարգավորմանը»:

«Եթե պատերազմ չլիներ, իմ կարծիքով ես չէի ունենա այս մարտական ոգին, որն օգնել է ինձ իմ կյանքում և դեռ շարունակում է օգնել: Երեխա ժամանակվանից ես սովորել եմ պատերազմին: Երբեք չեմ վախեցել պատերազմից: Ես միշտ գիտեի, որ մենք կհաղթենք»:

Կարիքների կեղծ բավարարում

Երկար տարիներ «ո՛չ խաղաղություն, ո՛չ պատերազմ» կարգավիճակի ընթացքում հակամարտությունը որպես գործիք է օգտագործվել թե՛ իշխանությունների, թե՛ հասարակությունների և թե՛ առանձին անհատների կողմից: Բոլոր երեք հասարակություններում հարցվածներն իրենց կարծիքներում նշում էին, որ պատերազմը կարող էր բավարարել այնպիսի հիմնական կարիքներ, ինչպիսին են անվտանգությունը, ինքնությունը, ազատությունը և այլն: Այնուամենայնիվ, պետք է հասկանալ, որ զինված հակամարտությունը հանդիսանում է այս խնդիրների կեղծ լուծում, քանզի այն, փաստորեն, առանց բացառության, ոչնչացնում է մարդկային բոլոր հիմնական պահանջումները բավարարելու հնարավորությունը:

«Հենց որ մեզ մոտ գները բարձրանում են իրավիճակը սահմանում անմիջապես սրվում է մեր ուշադրությունը շեղելու համար: Այդ ժամանակ մտածում ես, որ ավելի լավ է ցամաք հացով ապրել, քան թե նորից պատերազմ տեսնել»:

Խաղաղության և փոխզիջման եզրաբանությունը

Հակամարտության մասով թվում է, որ բոլոր երեք հանրույթներն էլ պատրաստ են վճարելու մեծ գին. պարզապես չլինի պատերազմ (հիշտ է Ադրբեջանին սա ամենաքիչն է վերաբերում): Այս իրավիճակն աշխատում է բացասական խաղաղությունը պահպանելու ուղղությամբ, մինչդեռ իշխանությունները ժամանակն օգտագործում են պատերազմին պատրաստվելու համար, թեև պաշտոնական հոստորաբանության համաձայն սա այն գիտն է, որ պետք է վճարվի խաղաղությունը երկարաձգելու համար: Հասարակությունները զգում են, որ պատերազմն անխուսափելի է: Իշխանությունները շահարկում են այս վախը, որպեսզի մարդկանց ուշադրությունը շեղեն տնտեսական դժվարություններից, ռազմական ծախսերից և ժողովրդավարական, սոցիալական գործընթացների իրագործման ձախողումից:

«Երբ գնում ես քաղաք, տեսնում գեղեցիկ շենքեր և լավ հագնված մարդանց ու համեմատում այդ ամենը քո սեփական կյանքի հետ, դու էլ ես ուզում ունենալ այն, ինչ նրանք ունեն: Իրոք ծանր է: Երբեմն գլուխս ցավում է, երբ մտածում եմ այսպիսի բաների մասին»:

Բոլոր երեք հասարակություններում գոյություն ունեն էական տարբերություններ այնպիսի եզրույթների ընկալման միջև, ինչպիսին են խաղաղությունը և փոխզիջումը: Մարդիկ չեն հասկանում, թե ինչ կարող են նշանակել այս բառերը մյուսների համար, չնայած նրանք հաճախ կարող են հայտնել իրենց պատրաստակամությունը պաշտպանելու այս կամ այն գաղափարը, ինչպես որ իրենք են դա ընկալում: Երբեմն մարդիկ մեղադրում են միմյանց, որ չեն կամենում ձգտել խաղաղության կամ փոխզիջման այն իմաստով, ինչպես որ

«Մենք կանգնած ենք բանակի թիկունքում և պետք է ապրենք լիարժեք կյանքով և միշտ հիշենք, որ եթե բանակն այնտեղ չլիներ, ապա աղետ կլիներ»:

իրենք են հասկանում այս եզրույթները: Սա ակնհայտորեն ազդում է խաղաղության հաստատման գործընթացների վրա:

Օրինակ՝ Հայաստանում հարցվածներից շատերը կարծում էին, որ իրենք արդեն ապրում էին խաղաղության մեջ՝ ընկալելով այն իրենց հաղթանակի տեսքով: Ուստի նրանց համար այլևս որևէ կարիք չկա քննարկել հակամարտության լուծումը: Սակայն Ադրբեջանում հարցվածները գործերի ընթացիկ վիճակը տեսնում են որպես պարտություն, ինչը նրանց մոտ առաջացնում է զգայական ահռելի տրավմա:

Ավելին, մինչ շատ հարցվածներ խոսում էին խաղաղության անհրաժեշտության մասին, Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի հարցվածները դա հասկանում էին որպես կայունություն: Սակայն Ադրբեջանում հարցվածները խաղաղությունն ընկալում էին նաև որպես արդարություն: Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում կատարված հարցումները ցույց են տալիս, որ մարդիկ արդեն գտել են արդարություն, որը նրանք փնտրում էին 1915թ. դեպքերից ի վեր: Սակայն Ադրբեջանի հարցվածների համար կայունությունը հնարավոր կլինի միայն այն ժամանակ, երբ լինի արդարություն, իսկ վերջինս նշանակում է հողերի վերադարձ:

«Մենք ուզում ենք խաղաղություն: Արդար հաղաղություն: Մեզ պետք չէ անարդար խաղաղություն»:

6. Առաջարկներ

Այս առաջարկների նպատակն է ծառայել որպես ուղեցույց խաղաղության համար բանակցող կողմերի, քաղաքական շրջանակների ներկայացուցիչների, դոնորների, ազգային և միջազգային քաղաքացիական ակտիվիստների համար, որոնք ձգտում են փոխըմբռնման և խաղաղության հասնել Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ բաժանված հասարակությունների միջև:

Աշխատանք ինքնուիշխան ատնչվող հարցերի վրա

- Սեփական ինքնուիշխան քննադատական վերլուծությունը բարդ է և ցավոտ: Սակայն դրա անհրաժեշտության գիտակցումն անհատներին և հասարակություններին կարող է հնարավորություն ընձեռել վերացարկվելու իրենց իրողությունից, հակամարտությունը զատել իրենցից, կողքից դիտելու իրենց և հակամարտությանը և, հետևաբար, ավելի լավ հասկանալ իրենց տեղը այդ հակամարտության մեջ: Սա մասնավորապես հնարավոր է անել՝ խրախուսելով քննադատական մտածողության զարգացումը, ուսումնասիրելով «ինքնուիշխան» հասկացության նենգափոխումն ինչպես անհատի, այնպես էլ հասարակության մակարդակում: Եթե անհատի և հասարակության որպես ամբողջության, ինքնուիշխան մեջ պետք է փոփոխություններ լինեն, ապա դրանք պետք է փոխարինվեն որևէ այլ բանով:
- Այլընտրանքային պատմական դիսկուրսի զարգացումը ընկալված և բազմակողմանի ինքնուիշխան հայեցակետերի շուրջ, «խաղաղության հերոսներին» (ի հակադրություն ռազմական հերոսների) դրական կերպարով դերային մոդել պատկերելը կարող է ապահովել հզոր այլընտրանք էթնոկենտրոն մոտեցումներին:
- «Սերտած անօգնականությունը» վերացնելու համար մարդկանց անհրաժեշտ է վերականգնել սեփական ուժը իրենց ամենօրյա կյանքի վրա ազդող որոշումների կայացման մեջ: Տարբեր մակարդակներում քաղաքացիական ակտիվության մեջ ներգրավման հնարավորությունները պետք է խրախուսվեն հաշվի առնելով տեղական յուրահատուկ հանգամանքները և ռիսկի գործոնները: Անհրաժեշտ է հասկանալ, որ քաղաքացիական հասարակության մաս կազմելը չի սահմանափակվում ՈԿԿ-ներում աշխատելով: Միևնույն ժամանակ պետք է արժևորվի անհատական կարծիքն ու անձի գործոնը: Այս փոփոխությունների կայացման դեպքում մարդիկ ավելի լավ կկարողանան բարձրաձայնել, ապա և գործել սեփական տեսանկյունից և ոչ թե իրենց երկրի կամ սոցիալական խմբի թելադրանքով: Այսպիսով, նման մոտեցումը կարող է օգնել ձևափոխելու ինչպես տարբեր խմբերի, այնպես էլ հակամարտության կողմերի կարծիքներն ու գործողությունները:

Աշխատանք ընտրված թիրախային խմբերի հետ

- Խաղաղ կարգավորման ուղիներ փնտրելու համար ամենից պատրաստված և ակտիվ մարդիկ հակամարտությունից տուժածներն են կրակագծին մոտ ապրողները, անմիջականորեն մարտնչած, մահվան և ավերածության սկանառեսները (բժիշկները, նախկին մարտիկները) և գորակոչի տարիքի պատանիները: Հետևաբար, մենք պետք է օգտագործենք հակամարտության մեջ առկա խաղաղարար ներուժը՝ աշխատելով այն մարդկանց հետ, ովքեր անմիջականորեն մասնակից են եղել պատերազմին և ապրել «մյուս» կողմի մարդկանց հետ: Նրանք կարող են քանդել իրենց հասարակություններում հակամարտության վերաբերյալ եղած կարծրատիպերը և գործնական քայլեր ձեռնարկել օժանդակելու խաղաղության հաստատման նախաձեռնություններին:



© JAMnews

- Կարևոր է հաշվի առնել գենդերային և սերնդային դերերի տարբերությունները երեք հասարակությունների ներսում հասկանալու համար, թե ինչպես է հակամարտությունը «պատկանում» հասարակության որոշակի խմբերին: Անհրաժեշտ է կիրառել տարբեր ձևաչափեր Ադրբեջանի երիտասարդների հետ աշխատելիս, քանի որ նրանք կտրված են հակամարտության իրականությունից, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի երիտասարդ սերնդի հետ, ովքեր արդեն ունեն ռազմական փորձառություն: Երիտասարդական նախագծերին ցուցաբերած համընդհանուր, «շաբլոնային» մոտեցումը չի կարող աշխատել այստեղ: Հասարակությունների ներսում տարբեր սերունդների միջև երկխոսության հստակ կարիք կա, որը կմիավորի պատերազմի միջով անցած և պատերազմին չմասնակցած անձանց: Այս ձևաչափի ստեղծումը հետագայում կարող է երկխոսության վերածվել հակամարտության տարբեր խմբերի կամ կողմերի միջև:
- Քաղաքացիական ակտիվության և գործունեության համար կարևոր է կենտրոնանալ կարծրատիպերի վերացման և հնարավորությունների զարգացման վրա՝ զուգահեռ աշխատելով փախստականների և տեղահանված անձանց և ընդունող համայնքների հետ: Փախստականներին և տեղահանվածներին մշտապես խրախուսել են սպասել տունդարձին, հուսադրելով, որ նրանք այնտեղ կկարողանան ապրել երջանիկ կյանքով: Ժամանակն է կենտրոնանալ նրանց կարիքների ու ձգտումների քննարկման վրա: Ընդունող համայնքները պետք է իրազեկվեն փախստականներին և տեղահանվածներին պատած կարծրատիպերի և հակամարտության բռնկման պոտենցիալ ռիսկերի մասին, եթե իրագործվեն փախստականների տունդարձի հետ կապված պաշտոնական պլանները: Կարևոր է աշխատել փախստականների և տեղահանվածների տունդարձի վերաբերյալ հասարակություններում առկա վախերի հետ՝ ցույց տալով այս մարդկանց ցանկությունների հավաստի պատկերը:

Աշխատանք դիսկուրսի շուրջ

- Ապամարդկայնացման (դեհումանիզացիայի) խնդրի հետ առնչվելիս անհրաժեշտ է վերադառնալ անհատին, որն իր ուսերին է պահել պատերազմի ծանր բեռը, նրա զգացմունքներին, մտքերին, վախերին և հույսերին: Պետք է տեսնել և արժևորել անհատի անձնական պատմությունը: Միայն այդ ժամանակ հնարավոր կլինի գնահատել մարդու արժեքը և գործունեությունը: Լրատվական բաց նախագծերը կարևոր հարթակ են անձնական պատմությունները ներկայացնելու և կարեկցություն արթնացնելու համար: Հայրենակիցների նկատմամբ մարդասիրության վերականգնման վրա աշխատելը կարող է հասարակությունների ներսում պայմաններ ստեղծել խաղաղարար նախաձեռնությունների համար: Օրինակները ներառում են սահմանամերձ վայրերում ապրող և ամեն օր պատերազմից տուժող մարդկանց իրական կյանքի մասին տեղեկատվության տարածումը, ինչպես նաև հանրության իրազեկումն այն մասին, թե ինչպիսին է իրականում կյանքը, երբ ապրում ես կույր փամփուշտից մահանալու մշտական վախով:
- Պրագմատիկ փաստարկների միջոցով անհրաժեշտ է իրազեկել մարդկանց հակամարտության համար իրենց վճարած գնի մասին (տնտեսական իմաստով): Եթե մարդիկ գիտակցեն, որ ամեն անհատ և ընտանիք վճարում է հակամարտության և ոչ թե խաղաղության համար, ապա սա կարող է օգնել փոխելու հակամարտության դինամիկան:
- Թշնամու կերպարի տարածման պատճառով առաջացած վնասի մասին անհանգստություն արտահայտելով՝ հարցվածները, կարելի ասել, արդեն իսկ փնտրում են ստեղծված իրավիճակից դուրս գալու հանապարհներ: Թշնամու կերպարի և ատելության պրոպագանդայից հասարակությանն ու երիտասարդությանը հասցված լուրջ վնասի և ազգային ինքնության վրա ունեցած դրա ազդեցության գիտակցումը կարող է ունենալ դրական ազդեցություն: Բացի այդ ակնհայտ է, որ քննադատական մտածողության զարգացումը կարող է բարձրացնել քարոզչությանը դիմադրելու՝ մարդկանց կարողությունը: Պետք է աշխատանք տանել ադրբեջանական իշխանությունների դիրքորոշումը հանրության կարծիքից տարբերակելու ուղղությամբ: Երկուսի միջև հստակ սահման անցկացնելով՝ հնարավորություն կստեղծվի աջակցել նրանց, ովքեր ընդդիմանում են քարոզչությանը և կողմ են հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Աշխատանք երկխոսության ամենատարբեր ձևերի ուղղությամբ

Երկխոսություն հանրությունների միջև

- Բոլոր կողմերն էլ ուժն ընկալում էին որպես հակամարտության վրա ներգործելու գրեթե մոգական ներուժ ունեցող մի բան: Այս իրավիճակում արժե այս հասկացությունը կիսել ավելի փոքր, ավելի կոնկրետ տարրերի: Հակամարտությունը վիթխարի համարելով դժվար է պատկերացնել իրական լուծումները: Մեկ սկզբնակետը կարող է լինել այն հավաստիացումը, թե ինչն է կարևոր մարդկանց համար իրենց ամենօրյա կյանքում և սկսել «փոքր» բաներից, որոնք կարող են դրական արդյունք ունենալ: Օրինակներում նշվում է սահմանամերձ շրջանների բնակչության առօրյա կյանքի անվտանգության բարելավումը և ազատ տեղաշարժելու իրավունքի ապահովումը: Նախքան քաղաքական մեծ որոշումների

3 Տե՛ս Հ Մյուլլեր «Հակամարտության տնտեսական գինը», 2013, էջ 8-12 և Մ.Մ. բին Մոհամադ Ասլամ, «Դայեշի վտանգը համալսարաններում. Մալայզիայի փորձը հակա-ահաբեկչական միտումներ և վերլուծություններ», 2017, էջ 13-17 H. Mueller, The economic cost of conflict, IGC working paper, 2013, pp.8–12, <http://www.iae.csic.es/investigatorsMaterial/a152611094820archivoPdf72447.pdf>; M.M. bin Mohammad Aslam, Threat of Daesh in universities: Malaysia's experience, Counter Terrorist Trends and Analyses, 9(4), 2017, pp.13–17

ընդունումը անհրաժեշտ են հումանիտար որոշումներ և քայլեր: Դա կօգնի ստեղծել մի իրավիճակ, երբ հասարակությունները խաղաղությունը կարող են ընդունել որպես արժեքավոր մի բան և որպես գործիք: Մարդու հիմնական կարիքների բավարարման նպատակով առօրյա կյանքում խաղաղության հաստատման ուղղությամբ աշխատանքը կարող է աստիճանաբար ստորադասել հակամարտությունը պատերազմով կարգավորելու մարդկանց պատրաստակամությունը: Հակամարտության վերլուծությունը կարող է ցույց տալ, թե ինչպես յուրաքանչյուր մարդ կարող է կիրառել այս ուժը:

- Հարցվածները նշում էին հայերի և ադրբեջանցիների առևտուր անելու և սակարկելու հմտությունը՝ որպես նրանց բնորոշ ընդհանուր հատկանիշներից մեկը: Չնայած այստեղ երկխոսության ներուժ կա, սակայն այն ձևը, որով այս ռեսուրսը ներկայումս օգտագործվում է, հավանաբար կթուլացնի փոխզիջման որոնումը: Ամենքի համար առևտրի հնարավորությունների, շահույթի մասին քննարկումները պետք է խրախուսվեն: Հասարակություններում քաղաքական հեռահար խաղաղություն տեսնելը, նույնիսկ եթե վերացական և դեռևս անիրական, կօգնի ստեղծել այլընտրանք ռազմական հոստորաբանությանը:
- Բոլոր երեք հասարակություններում հարցվածները խոսում էին սոցիալական արդարության մասին: Այս բնագոյային ընկալումը, թե հակամարտությունն առաջացնում է անորոշություն բազմաթիվ տարբեր մակարդակներում, կարող է օգտագործվել մտորելու ազնիվ և արդար խաղաղության շուրջ: Սոցիալական արդարության համար այս ցանկության և հակամարտության հետ դրա կապերի մասին ընկալումների շուրջ քննարկումները պետք է անցկացվեն ինչպես հանրությունների ներսում, այնպես էլ նրանց միջև: Սա կօգնի նույնականացնել և քննարկել ընդհանուր մարտահրավերները:

Երկխոսություն հանրությունների ներսում

- Խիստ կարևոր է, որ մարդիկ հասկանան «խաղաղություն» և «փոխզիջում» եզրույթների երկուստեք ընկալումները: Սա կարող է նպաստել բաժանված հասարակությունների ներսում տարբեր խմբերի միջև երկխոսության հաստատմանը և նվազեցնել այս եզրույթների միջոցով մարդկանց մոլորեցնելու և շահարկելու վտանգը: Հարցվածների զգալի մեծամասնությունը խոսում է խաղաղության անհրաժեշտության մասին: Այս ցանկությունը կարող է օգտագործվել քննարկում սկսելու այն հարցերի շուրջ, թե ինչ պետք է տեղի ունենա, որպեսզի անհատներն ու հասարակությունները հասկանան, որ խաղաղությունը հասանելի է և, ի վերջո, ինչ է անհրաժեշտ այդ խաղաղությունը պահպանելու համար: Այսպիսի քննարկումը կօգնի հասկանալ տարբերությունը բացասական ու դրական խաղաղության միջև և պարզել, թե ինչ են մարդիկ իրականում ուզում:
- Բոլոր կողմերից պահանջվում է փոխզիջման հայեցակարգի ավելի խորն ընկալում, որը, որպես խաղաղության անհրաժեշտ հիմք և մեխանիզմ, հենված է փոխադարձ զիջումների վրա: Յուրաքանչյուր կողմն էլ ընդունում է փոխզիջումը, բայց միայն հակադիր կողմից: Քիչ է խոսվում այն մասին, թե ինչ զիջումների են պատրաստ գնալ *հենց իրենք*՝ հասարակություններն ու անհատները: Փոխզիջման առկա ներուժը, ընթացիկ թեժ գծերը և քողարկված մարտահրավերները խորը ուսումնասիրության և վերլուծության կարիք ունեն: Այս գործընթացում պետք է ընդգրկվեն տարբեր մակարդակի շահագրգիռ կողմերը՝ սովորական քաղաքացուց մինչև որոշում կայացնող գործիչները: Այսպիսի գործընթացը կպահանջի ներգրավման տարբեր մեթոդներ և նույնիսկ թեմայի վերաձևակերպում՝ օգտագործելով «փոխզիջում» բառի այլ եզրույթներ ու նրբասություններ:

International Alert

346 Clapham Road, London, SW9 9AP, United Kingdom

Tel +44 (0)20 7627 6800 **Fax** +44 (0)20 7627 6900

info@international-alert.org

www.international-alert.org

Registered charity no. 327553

ISBN: 978-1-911080-98-5



/InternationalAlert



@intalert